

ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«-----» ----- 2008 թվականի N -

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ազատ տնտեսական գոտու ստեղծման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին երկամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ կառավարության 2008 թվականի

մայիսի N -Ն որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶՈՒՄ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ

ՍՏԵՂԾՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ (SWOT անալիզ).....	4
ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	6
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ.....	8
ՌԻՍԿԵՐ.....	10
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ.....	10

1. ՆԱԽԱԲԱՆ

Սույն հայեցակարգը մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով որդեգրված քաղաքականությունը և սահմանված ռազմավարական գերակայությունները, և ուղղված է Երևանի ու մարզերի միջև անհամասնությունների և բնակչության եկամուտների կրճատմանը, գործարար միջավայրի բարելավմանը և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը:

Տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում է Հայաստանի մարզային քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացումն և ներդրումային ակտիվության խրախուսումը, մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճը, համայնքային ենթակառուցվածքների

(ճանապարհներ, ջրամատակարարում) գնահատումը, դրանց կարգաբերումը ու զարգացումը: Մարզային քաղաքների զարգացումը հնարավորություն կտա ոչ միայն կրճատել տվյալ քաղաքի և Երևանի միջև անհամամասնությունը, այլ նաև կբարձրանա մարզային քաղաքների դերը, որպես տարածաշրջանի տնտեսական կենտրոն, լուրջ հնարավորություններ կստեղծի հանրապետության իրական ուրբանիզացման մակարդակի բարձրացման համար՝ ապահովելով տարածքային անհամաչափությունների համահարթեցումը և երկրի կայուն տնտեսական աճը՝ օրինակ ծառայելով գործարար միջավայրի բարելավման համար:

Կարևորելով Գյումրի քաղաքի դերը Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ՀՀ կառավարությունը նպատակ է դրել մարզային տնտեսական զարգացման նպատակային ծրագրերի իրականացումը սկսել Գյումրիից, պահպանելով նրա ավանդական մշակութային նկարագիրը, այն դարձնել ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներ ունեցող կենտրոնի, որտեղ ներկայացված կլինեն բարձր տեխնոլոգիաներ կիրառող ձեռնարկությունները, խոշոր կրթօջախներն ու գիտահետազոտական կենտրոնները: Դրա շրջանակներում արդեն իսկ սկսվել են Գյումրու տեխնոպարկի ստեղծման աշխատանքները, որի ստեղծումով հնարավորություն կընձեռնվի արտադրական գործընթացներում ընդգրկելու Գյումրի քաղաքի և, ընդհանրապես, Շիրակի մարզի բարձր որակավորման մասնագետներին՝ փոքր ձեռնարկությունների ստեղծման ճանապարհով, նախանշելով դրանց գերակայությունները և զարգացնելով մրցունակ ուղղությունները: Տեխնոպարկի ստեղծման հիմնական խնդիրներից է փոքր ձեռնարկատիրության զարգացման բազմակողմանի աջակցությունը, որի լուծման համար հատուկ ուշադրության է արժանի Տեխնոպարկի կազմակերպական կառուցվածքում բիզնես-ինկուբատորի ներառումը:

2. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ

ՎԵՐԼՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ (SWOT անալիզ)

Գյումրի քաղաքը բնակչության թվաքանակով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը Երևանից հետո: Քաղաքը յուրահատուկ արժեք է ներկայացնում իր պատմա-մշակութային ժառանգությամբ:

Քաղաքը ունի մշակույթային, կրթական և արդյունաբերական հարուստ ավանդույթներ: Քաղաքում առկա են 5 պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղեր և 3 բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Գյումրիում ավանդաբար զարգացած է թեթև արդյունաբերության, ոսկեգործության, սարքաշինության, մեքենաշինության, հաստոցաշինության ոլորտները, ինչպես նաև հայտնի է իր ազգային ավանդական արհեստների առկայությամբ:

Ստորև բերված են Գյումրի քաղաքի հիմնական մշակույթային և ֆիզիկական առավելությունները, որոնք կարող են հիմք ծառայել զարգացած տնտեսության կայացման և կայուն աշխատատեղերի ստեղծման համար:

2.1 Ուժեղ Կողմերը

- Պատմական քաղաքի հարուստ պատմություն
- Կայացած Համայնք և Գործուն Սփյուռք
- Պատմա-Ճարտարապետական և քաղաքաշինական միջավայր
 - Կումայրի Ճարտարապետական հուշարձան
 - Եկեղեցիներ
- Գիտակրթական հաստատություններ
 - Պետական Ճարտարագիտական Համալսարանի մասնաճյուղ
 - Պետական Տնտեսագիտական Համալսարանի մասնաճյուղ
 - Երևանի Պետական Կոնսերվատորիայի մասնաճյուղ
 - Երևանի Պետական Կոնսերվատորիայի Համալսարանի մասնաճյուղ
 - Գյումրիի «Անանիա Շիրակացու» անվ. Համալսարան
 - Գյումրիի «Պրոգրես» Համալսարան
 - Գյումրիի «Շիրակ» Համալսարան
- Արդյունաբերական և առևտրային ազատ տարածքների առկայություն

- Գործող օդանավակայան
- Միջհանրապետական ճանապարհային հանգույց
- Ռուսական բանակային հենակետ
- Ռեգիոնալ Առևտրային հանգույց

2.2 Թույլ Կողմերը

- Պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության ցածր մակարդակ
- Բյուրոկրատիա
- Տեղական փոքր և թերզարգացած շուկաներ
- Աղքատություն և ցածր եկամուտներ
- Կախյալ բիզնես-մշակույթ
- Փոքր և միջին ձեռնարկությունների ցածր կշիռ
- Վարկավորման փոքր հնարավորություններ և բանկային ռիսկերի չափից ավելի կոշտ կառավարում
- Քաղաքի վերականգման խնդիրներ, տնակներում բնակվող բնակչության առկայություն
- Թերզարգացած ենթակառուցվածքներ
- Քաղաքի զարգացվածության մասին վատ արտաքին ընկալում

2.3 Հնարավորություններ

- Միջազգային օդանավակայանի ստեղծում
- Հին քաղաքի վերածնունդ
- Տնտեսության գիտատար ճյուղերի զարգացում
- Մշակութային զբոսաշրջություն
- Նոր արդյունաբերական հատվածների ստեղծում

- Առևտրային գոտու ստեղծում քաղաքի և օդանավակայանի միջև ընկած հատվածում
- Քաղաքում կանաչ գոտիների ստեղծում
- Միջազգային առևտրի խթանում
- Սփյուռքի ներուժ

2.4 Վտանգներ

- Մակրոտնտեսական իրավիճակի փոփոխություն
- Տարածաշրջանային անվտանգություն, փակ սահմաններ
- Չարձագանքող դրոսը կազմակերպություններ
- Մասնավոր հատվածի ակտիվացման ձախողում
- Մարդկային, արտադրական և ֆինանսական ներուժի անկայունություն
- Արտագաղթի ուժեղացում
- Չձևավորված ներքին քաղաքական կառուցվածք

3. ԱԶՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ազատ տնտեսական գոտու ստեղծման նպատակն է Գյումրի քաղաքի տեխնոպարկի ստեղծման և Գյումրի քաղաքի Կումայրի արգելոցի պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման ու պահպանման ծրագրերի շրջանակներում զարգացնել հետևյալ ոլորտները.

- զբոսաշրջություն,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- ճարտարագիտություն (զբոսաշրջություն, կառուցապատման և շինարարական ժամանակակից տեխնոլոգիաներ),
- նորաձևություն, և տեքստիլ արդյունաբերություն,
- արվեստ,
- ոսկեգործություն,
- արհեստագործություն:

Վերոհիշյալ ոլորտների զարգացումն ապահովելու նպատակով Գյումրիի «Շիրակ» օդանավակայանին կից տարածքում կստեղծվի ազատ տնտեսական գոտի:

Ազատ տնտեսական գոտու տարածքում գործելու է

1. ձեռնարկությունների գրանցման պարզեցված՝ մեկ պատուհանի սկզբունքով (այդ թվում նորագույն՝ on-line ռեժիմով) ընթացակարգ,
2. ապրանքների, ծառայությունների ներմուծման և արտահանման պարզեցված և արագացված ռեժիմ,
3. ստանդարտացման և արտոնագրման մասնաճյուղ, հազեցված այն համապատասխան տեխնիկայով, որը թույլ կտա արագացված ռեժիմով կատարել համապատասխան աշխատանքներ,
4. ՓՄՁ սուբյեկտներին ուղղված բարձորակ բանկային ծառայություններ, բիզնեսի վարկավորման պարզեցված մեխանիզմներ,
5. հարկային հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացում,
6. թափանցիկ հարկային ստուգումների ընթացակարգ,
7. տնտեսվարող սուբյեկտների կողմից տարեկան ոչ ավել քան 7 անգամյա հարկային հաշվետվությունների ներկայացում,
8. մաքսակետի հիմնում և պարզեցված մաքսային ընթացակարգերի կիրառում,
9. Ազատ մաքսային պահեստի ստեղծում,
10. Գյումրի քաղաքի համար ավանդական հանդիսացող՝ տեքստիլ արդյունաբերության, ոսկեգործության, արհեստագործության ոլորտների ազատում ավելացված արժեքի հարկից և շահութահարկից:

Այդ ոլորտների համար կսահմանվի «ենթակառուցվածքների զարգացման հարկ», որը կուղղվի ազատ տնտեսական գոտու ենթակառուցվածքների զարգացմանը:

Որպեսզի այս տարածքում բիզնես միջավայրն իրեն կարողանա լիարժեք դրսևորել, այս տարածքում անհրաժեշտ է ենթակառուցվածքային բարեփոխումներ: Առաջին հերթին կարևորվում է ճանապարհաշինությունը: «Շիրակ» օդանավակայանի միջազգային չվերթների ուղղությունների ավելացում՝ բեռնափոխադրումներն ապահովելու նպատակով: Մատչելի պետք է լինեն կապը

(ինտերնետ, հեռախոս, ֆաքս), բեռնափոխադրումները, էներգակիները (էլեկտրաէներգիա, բենզին, գազ), չվերթների տոմսերի արժեքը:

4. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Գյումրու տնտեսական զարգացման նպատակով իրականացվող Գյումրի քաղաքում տեխնոպարկի ստեղծման, Գյումրի քաղաքի Կոմայրի արգելոցի պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման ու պահպանման և ազատ տնտեսական գոտու ստեղծման աշխատանքները կիրականցվեն ըստ փուլերի:

I փուլ

Կստեղծվի 3 ծրագրերի աշխատանքները համակարգող կառավարման խորհուրդ և յուրաքանչյուր ծրագրի իրականացումն ապահովող աշխատանքային խմբեր, որոնցում կներգրավվեն ներկայացուցիչներ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, գիտա-կրթական, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների և հայաստանում ներկայացված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

II փուլ

Կիրականացվի նախատեսված տարածքների, նրանցում առկա կազմակերպությունների գույքագրում, որի նպատակն է ի մի բերելով առկա արտադրական, գիտական, պատմամշակութային և ենթակառուցվածքային պոտենցիալը, նրանց սեփականության իրավունքների պատկանելիությունը և նրանց վերոհիշյալ ծրագրերում ներառելու հնարավորությունները:

III փուլ

Հաշվի առնելով իրականացված գույքագրման արդյունքները և աշխատանքային խմբերի կողմից ներկայացված առաջարկությունները կառավարման խորհուրդը որոշում կկայացնի Գյումրու տեխնոպարկի, Կումայրի արգելոցի և ազատ տնտեսական գոտու ստեղծման և զարգացման բիզնես մոդելի ընտրության վերաբերյալ:

Գյումրիի տեխնոպարկում կներառվեն և կզարգանան հետևյալ ոլորտները.

- զբոսաշրջություն,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- ճարտարագիտություն (կառուցապատման և շինարարական ժամանակակից տեխնոլոգիաներ),
- նորաձևություն և տեքստիլ արդյունաբերություն,
- արվեստ,
- ոսկեգործություն,
- արհեստագործություն:

Նորաձևության, ոսկեգործության, արվեստի, արհեստագործության, զբոսաշրջության և սպասարկումների ոլորտները կընդգրկվեն Կումայրի արգելոցի տարածքում

Կքննարկվի նաև Կումայրի արգելոցը, Գյումրու տեխնոպարկը և Գյումրու «Շիրակ» օդանավակայանը իրար կապելու ենթակառուցվածների ընտրության հարցը (Էտակադա, արագընթաց ժամանակակից երկաթգիծ):

IV փուլ

Ընտրված մոդելին և գույքագրման արդյունքներին համապատասխան կիրականացվի Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի նախագծում և մակետի պատրաստում: Մակետը կներառի շենքեր և շինություններ, որոնք արդեն իսկ նախանշում են ունենալու, թե ինչ ոլորտի աշխատանքներ են իրականացնելու: Նշվելու են ինստիտուտների շենքերը, օֆիսային շենքերը, շինություններում լաբորատոր աշխատանքների իրականացման վայրեր և այլն: Այդ շինությունների նախագծերը (մեկ կամ մի քանի շենք, կամ թաղամաս) տրամադրվելու են նախնական

պայմանավորվածություն ունեցող տնտեսվարող սուբյեկտներին՝ իրականացնելու նախագիծը, որը սեփականության իրավունքով պատկանելու է նրան՝ օտարման սակագնային նախապայմանով: Մակետում նշված կառույցների կառուցումը իրականացվելու է թափանցիկ եղանակով: Այսինքն բոլոր ցանկացողները, ընդունելով նախապայմանները և ստանալով թույլտվություն, կարող են կառուցել շինություն՝ ըստ մակետում նշված պահանջների:

V փուլ

Այս փուլում կկատարվեն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ներգրավման աշխատանքներ: Գույքագրման, գլխավոր հատակագծի և մակետի պատրաստման աշխատանքները կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Ծրագրի իրականացման մյուս բաղադրիչների իրականացման նպատակով կներգրավվեն մասնավոր հատվածի, սփյուռքի, դոնոր կազմակերպությունների միջոցները, իսկ այն միջոցառումները, որոնցում մասնավոր հատվածը հետաքրքրություն չի ցուցաբերի, նույնպես կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Ծրագրերը հիմնականում կֆինանսավորվեն պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքներով:

5. ՌԻՍԿԵՐ

Տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմման քաղաքականության իրականացման ընթացքում կարող են առաջանալ հետևյալ վտանգները՝

- ֆինանսական միջոցների պակաս
- Նախաձեռնությունների և բիզնես լիդերների պակաս
- հարկային տարբերակված մոտեցման հետևանքով, Երևան քաղաքի և այլ մարզերի գործարար ակտիվության նվազում,
- միջգաղափարային չափանիշներին համապատասխան կառավարիչների և որակյալ մասնագետների պակաս,

6. ԱԿՆԿԱԼ ՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

Ազատ տնտեսական գոտու ստեղծման արդյունքում նախատեսվում է՝

1. մարզի տնտեսության առաջանցիկ տեմպերով աճ,
2. Գյումրիի համար ավանդական հանդիսացող տեքստիլ արդյունաբերության, ոսկեգործության և արհեստագործության ոլորտների վերականգնում և զարգացում,
3. Արտադրական և գիտական սուբյեկտների մտավոր, տեղեկատվական, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների ինտեգրացում և ակտիվացում՝ մարզի և հանրապետության գիտաարտադրական ներուժի զարգացման համար,
4. Մարզում փոքր ու միջին կազմակերպությունների ստեղծման ու զարգացման պայմանների և բարենպաստ միջավայրի ձևավորում
5. նոր և որակյալ աշխատատեղերի ստեղծում,
6. բնակչության արտահոսքի կրճատում ու ներհոսքի խթանում, ինչպես երկրից դուրս, այնպես էլ մարզերից մայրաքաղաք,
7. Առաջադեմ տեխնոլոգիաների ձեռքբերման աջակցման նպատակով ներդրումային միջոցների ներգրավում (այդ թվում՝ օտարերկրյա),
8. Գիտատար արտադրանք նախաձեռնողներին և արտադրողներին՝ հասցեական աջակցության տրամադրում,
9. Գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում,
10. Փորձի կիրարկում հանրապետության այլ քաղաքների վրա: